ինչ հայկական լինի. ես ազդեցի՝ որ «Բաց 'ի եօթ-նաղահեան աշտանակէն որ աւագ խորանին վրայ է, օտար բան չտեսայ. զի իմ տեսած տաւրիացի հայկական եկեղեցիք խորանին միջավայրը ունին մի խաչ, և երկուստեք երեք կարգ փոքր աստիճանաց վրայ՝ մի մի աշտանակ, ընդ ամէնն վեց աշտանակ»։ Յովհաննէս աղա աւելցուց. «Եօթնաղահեան ոսկեզօծ աշտանակը 700 ռուբլիով գնուած է, սակայն և այնպէս որովհետև չէ ազգային, փոխելը հարկ է»։ Եթէ Յովհաննէս աղայի ոգւով լինէին միւս այլ գործող անձինք Նախիջևանու, աւելի պայծառ պիտի փայլէր ազգութիւն 'ի Նախիջևան։ Սակայն և այնպէս չէն է ազգութեամբ Նախիջևան և կենդանի լեզուն ազգիս ամեն տեղ։ — Այսչափ՝ եկեղեցեաց մասին։

Դպրոցաց մէջ անշուշտ առաջին տեղին պէտք է գրաւէ դպրավանքն կամ թեմական դպրանոց վիճակին (Սեմինարիում), յոր դասական վարժութիւն կը ստանան ուսանողք՝ հմտութեամբ հին յոյն և լատին լեզուաց, որոց աւանդողն և միանգամայն պաշտօնավար-տեսչի վարժարանին է Պ. Գալուստ Զարբհանեանց՝ տասուերկու ազգային վարժապետաց։

Այս արհեստական վարժոցը ընդ խնամով Պ. Ռաֆայէլ Պատկանեանցի, ազգային պուետի և հեղինակին Գամառ-Քաթիպայի։

Կոկոյ եան գիշերօթիկ օրիորդաց ուսումնարան, յորում են 60 օրիորդք։

Հռիփսիմեանց կոչուած օրիորդաց վարժարանը, յորում 123 են ուսանող օրիորդք։

Ծիսական դպրոցք Ս. Համբարձում և Ս. Թորոս եկեղեցեաց մօտ՝ մանչերու համար։